ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սույն թվականի մարտի 31-ից ապրիլի 2-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական լիագումար ժողովը՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով և Նորին Սրբության ողջույնի ու բարեմաղթանքի խոսքով: Ժողովականներն աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ի Տեր հանգուցյալ ԳՀԽ անդամ և Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբաններ Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյանի, Տ. Մանուել վարդապետ Երկաթյանի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի և Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազյանի հոգիների հանգստության համար:

Օրակարգի և նախորդ ժողովի արձանագրության ընթերցումից ու հաստատումից հետո, ատենապետությամբ ԳՀԽ երիցագույն անդամներ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանի և Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանի, ժողովը քննության առավ ազգային-եկեղեցական կյանքին վերաբերող խնդիրներ:

Թեմական հարցերի շարքում Գերագույն Հոգևոր Խորհուրդը զոհունակությամբ արձանագրեց, որ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում ստեղծված անցանկալի կացությունն այլևս վերացել է, և թեմը, գլխավորությամբ առաջնորդ Տ. Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյանի, կազմակերպում է ազգային-եկեղեցական իր բնականոն կյանքը:

Այնուհետև հետևեց Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանի զեկույցը Ֆրանսիայում Հայ Եկեղեցու թեմական կառույցների վերակազմավորման մասին: Սրբազան Հայրը հայտնեց, որ կանոնադրությունը ներկայացված է Ամենայն Հայոց Հայրապետին առ ի տնօրինություն: Գերագույն Հոգևոր Խորհրդում Վեհափառ Հայրապետի առաջադրմամբ կանոնադրության ուսումնասիրման համար ստեղծվեց հատուկ հանձնախումբ:

Գերագույն Հոգևոր Խորհրդում քննության առնվեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից Կանադայի հայոց թեմում հակականոնական թեմական զուգահեռ կառույց հաստատելու խնդիրը: Գերագույն Հոգևոր Խորհուրդն իր վերաբերմունքը խնդրի նկատմամբ արտահայտեց ընդունված հայտարարությամբ (տե՛ս ստորև):

Ժողովի ընթացքում քննարկվեցին եկող տարի Գրերի գյուտի 1600-ամյակի տոնակատարության և Եղեռնի 90-ամյակի տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպական խնդիրներ: Որոշվեց մասնավոր հանդիսություններով նաև նշել Վազգեն Ա երջանկահիշատակ Կաթողիկոսի վախճանման 10-ամյա տարելիցը:

Ժողովի ավարտին ԳՀԽ անդամներն աղոթք բարձրացրեցին՝ հայցելով, որ Տերը խաղաղություն պարգևի Հայոց աշխարհին, սիրո, եղբայրության ու հաշտության մեջ հաստատուն պահի աշխարհասփյուռ համայն հայ ժողովրդին՝ Փրկչի Հրաշափառ Հարության խորհրդով ընդառաջ գնալու Հայրենիքի զորացման և ժողովրդի բարօրության: